

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Տ Ա Վ ՈՒ Շ Ի Մ Ա Ր Ձ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մ Ա Ր Ձ Խ Ո Ր Հ Ր Դ Ի Ն Ի Ս Տ Ի

09 սեպտեմբերի 2016թ.

Ք. Իցևան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2016 թվականի սեպտեմբերի 9-ին ժ.11⁰⁰-ին կայացած ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

1. 2015-2016 ուսումնական տարվա արդյունքները և նոր ուսումնական տարվա հիմնախնդիրները

/զեկ. Կ.Նազարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի

Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ/

2. Մարզի համայնքների 2016թ. առաջին կիսամյակի սեփական եկամուտների կատարողականների մասին

/զեկ.Ռ.Ներսեսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

3. Մարզպետարանի աշխատակազմի ՍԱՏԳ-ների կողմից իրականացվող գործառույթների կատարման ընթացքի մասին

/զեկ.Ն.Ճաղարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ/

4. <<Սեռի հատկանիշով բռնության կանխարգելման>> և <<Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության>> 2016թ. Ծրագրերի ուղղությամբ մարզում կատարվող աշխատանքների մասին

/զեկ.Հ.Քոչարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ/

5. Մարզի համայնքներում 2016թ. առաջին կիսամյակում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին

/զեկ.Մ.Մխիթարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով

վարչության պետ/

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

09 սեպտեմբերի 2016թ.

ք.Իջևան

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Հ.Աբովյանը.

Մարզխորհրդի 63 անդամներից ներկա էին 59-ը:

Նիստին ներկա էին ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, պատասխանատու աշխատողներ:

1. 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓՈՒՄ

/զեկ.՝ Կ.Նազարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզում գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների թվային տվյալները եվ աշակերտների թիվը 2014-2015, 2015-2016 ուստարիների և 2016-2017 ուստարվա նախնական թվային տվյալները հետևյալն են՝

	2014-2015 ուստարում	2015-2016 ուստարում	2016-2017 ուստարում (կանխատեսվող)
Դասարանների թիվը	914	921	931
Աշակերտների թիվը	15777	15868	16181
Ուսուցիչների թիվը	2255	1893	1880
Առաջին դասարանցիների թիվը սեպտեմբերի 1-ի դրությամբ	1485	1737	1792
Բազմակուսակետ դասարանների թիվը	86	85	85
Նախակրթարանների թիվը	10	10	18
Նախակրթարաններում ընդգրկված 5-6 տարեկան երեխաների թիվը	169	184	245
Նախադպրոցական հիմնարկների թիվը	46	48	48
Նախադպրոցական հիմնարկներում ընդգրկված երեխաների թիվը	2960	3216	
Նախադպրոցական հիմնարկների աշխատողների թիվը	509	655	655

Դպրոցներում աշխատող ուսուցիչների թիվը հասնում է 1900-ի, որոնց մեծ մասն ունի բարձրագույն կրթություն: Յուրաքանչյուր տարի ատեստավորվում է ուսուցիչների թվաքանակի 1/5-ը: Ատեստավորման գործընթացին նախորդում է ուսուցիչների վերապատրաստումը, որը հիմնականում իրականացվում է Կրթության ազգային ինստիտուտի Տավուշի մասնաճյուղում:

2015-2016 ուսումնական տարում նոյեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածում ատեստավորվել է 210 ուսուցիչ: 2016թ.-ին Կրթության ազգային ինստիտուտի Տավուշի մասնաճյուղում ուսուցիչների վերապատրաստումն իրականացվում է երկու փուլով. մարտ-հունիս ամիսներին վերապատրաստվել է 86 ուսուցիչ /6 խումբ/, հունիս-հոկտեմբեր ամիսներին վերապատրաստվելու է 187 ուսուցիչ /13 խումբ/: Վերապատրաստված ուսուցիչների ատեստավորումը նախատեսվում է անցկացնել 2016թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

2016թ.-ի ընթացքում տնօրենների վերապատրաստման և հավաստագրման գործընթացին մասնակցել է 55 անձ, որից 45-ը գործող տնօրեն: Հավաստագրվել է մասնակիցներից 54-ը: Վերապատրաստումն իրականացրել են կրթության ազգային ինստիտուտը կրթություն առանց սահմանի կազմակերպությունը:

Փաստաթղթային ատեստավորումից հետո տարակարգի ստացման համար 2013-2016թթ. ընթացքում մարզից տասներկու ուսուցիչ դիմել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն, և ՀՀ կրթության և գիտության նախարարը, հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի որոշումները, նրանց շնորհել է որակավորման առաջին աստիճանի տարակարգ:

Արդեն 5-րդ տարին է, որ ՀՀ Տավուշի մարզն ընդգրկվել է «Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթաձրագրում: 2016թ.-ին նախակրթարաններ են բացվելու մանկապարտեզ չունեցող ևս 8 համայնքներում:

2016թ. ընթացքում մարզի մի շարք մանկապարտեզների տնօրեններ և դաստիարակներ մասնակցել են Ճգնաժամի կառավարման ակադեմիայում կազմակերպված «Երեխաների անվտանգության մշակույթի ձևավորման հարցերի» վերաբերյալ դասընթացին:

Մարզի բոլոր մանկապարտեզներն ընդգրկված են «Քայլ առ քայլ» հիմնադրամի ծրագրում:

«Մեկ համայնք մեկ դպրոց» կիրակնօրյա դպրոցների և սոցիալ-կրթական կենտրոնների ծրագրի շրջանակներում Տավուշի Թեմի Առաջնորդարանի կողմից իրականացվել է Կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների վերապատրաստում, որին մասնակցել է 80 թեկնածու: Վերջիններից 60-ը ավարտական քննությունները հաջողությամբ հանձնելով կաշխատեն որպես թեմական կիրակնօրյա դպրոցների ուսուցիչներ՝ մարզի 15 համայնքում:

Ֆրանսիայի Նիս քաղաքի «Հայաստանի Հանրապետության երեխաների մանկազարթման ընկերակցության» ղեկավար տիկին Անահիտ Օհանյանի կողմից 2016թ. սեպտեմբերին գրենական պիտույքներ և խաղալիքներ կտրամադրվեն Պառավաքար, Մովսես, Չինարի, Այգեպար և Այգեծոր համայնքների մանկապարտեզներին:

Միջազգային համագործակցության շրջանակներում մարզպետարանը համագործակցում է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական ընկերության, «Վորլդ Վիժն», «GIZ», «Թրփանջյան հիմնադրամի» և «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ:

<<Վորլդ Վիժն>> միջազգային բարեգործական կազմակերպության և <<Երկուսով>> հոգեբանական մասնագիտացված կենտրոնի կողմից Իջևանի տարածքային զարգացման ծրագրի շրջակակներում 2015թ. դեկտեմբերի 16-17-ը երկօրյա դասընթացներ անցկացվեցին, որին մասնակցեցին Սարիգյուղի, Խաշթառակի, Գետահովիտի, Իջևանի թիվ 1 և թիվ 5 մանկապարտեզների տնօրենները

Մարզի հանրակրթական դպրոցներում 2015-2016 ուստարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

«Կառավարության ծրագրում ներառված է եղել «Մշակութային կազմակերպություն-դպրոց» արևմտեանտային համակարգի ներդրման պիլոտային ծրագիրը, որն իրականացվել է Երևանում՝ սահմանամերձ և սահմանապահ համայնքների հիմնական դպրոցների միջին դասարաններում սովորող աշակերտների (10-14 տարեկան) համար. երեք միջոցառում՝ մեկ ներկայացում, մեկ համերգային ծրագիր և մեկ թանգարանային այցելություն: Օրապահիկի և գիշերավարձի ծախսերը Երևան քաղաքում ֆինանսավորվել են ծրագրի շրջանակներում, իսկ տրանսպորտային ծախսերը մարզից Երևան և հակառակ ուղղությամբ հոգացել է մարզպետարանը:

«Կրթության և գիտության նախարարության և Երևանում գիտության և մշակույթի Ռուսաստանյան կենտրոնի կողմից կազմակերպվող միջոցառումների ծրագրում կազմակերպվել է բանաստեղծ Ս.Եսենինի 120-ամյակին նվիրված ասմունքի մրցույթ: Ասմունքի մրցույթին մասնակցել են 7-12-րդ դասարանների աշակերտներ:

Մարզի հանրակրթական բոլոր դպրոցներում ստեղծվել են <<Պատանի երկրապահ>> ակումբներ: 2015-2016 ուստարում երկու փուլով անցկացվել են սերժանտական դասընթացներ: Դասընթացների ավարտից հետո անցկացվել են ստուգաքններ, որոնց արդյունքում 500 աշակերտ ստացել է սերժանտական կոչում:

Դեկտեմբերի 4-ին մարզում իրականացվել են <<Հաշմանդամների իրավունքների պաշտպանության>> միջազգային օրվան նվիրված մի շարք միջոցառումներ:

2016թ. փետրվարի 20-ից մինչև մարտի 9-ը անցկացվել է դպրոցականների օլիմպիադաների երրորդ (մարզային) փուլը: Մրցութային առաջադրանքները կազմել են հանրապետական առարկայական հանձնաժողովները: Մարզային փուլին մասնակցել է 252 աշակերտ, որից 58-ը իրավունք է ստացել մասնակցելու դպրոցականների առարկայան օլիմպիադաների հանրապետական փուլին: Մարզպետի կողմից հաստատված հանրապետական փուլի մասնակիցների հայտերը՝ բացառությամբ մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության և ինֆորմատիկայի (վերջիններս անցկացվել են այլ ընթացակարգով), ներկայացվել են «ԿԳՆ: Դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի մասնակիցներից 5-ն արժանացել են դիպլոմների, 5-ը՝ գովասանագրերի: Մասնավորապես՝

h/h	Ազգանուն, անուն	Դպրոցը	Դաս.-ը	Առարկան	Պարգևատրումը
	Բայրամյան Արման	Իջևանի ա/դ	11-րդ	Հայոց լեզու	1-ին կարգի դիպլոմ
	Անանյան Սվետլանա	Նոյեմբերյանի ա/դ	12-րդ	Հայ. գրակ.	Գովասանագիր
	Փահլևանյան Լաուրա	Դիլիջանի ա/դ	12-րդ	Ռուսաց լ.	1-ին կարգի դիպլոմ
	Ալեքսանյան Մարետա	Դիլիջանի ա/դ	12-րդ	Ռուսաց լ.	1-ին կարգի դիպլոմ
	Եսայան Անուշիկ	Դիլիջանի ա/դ	12-րդ	Ռուսաց լ.	Գովասանագիր
	Զաքարյան Ինեսա	Դիլիջ. կենտ. դպրոց	9-րդ	Հայ. գրակ.	Գովասանագիր

	Սիրադեղյան Աննա	Սևքարի մ/դ	10-րդ	Ֆրանսեր. լ.	Գովասանագիր
	Եսայան Արփինե	Նավուրի մ/դ	11-րդ	ՀԵՊ	2-րդ կարգի դիպլոմ
	Ղազարյան Վիկտորյա	Բերդավանի մ/դ	9-րդ	Հայոց լեզու	2-րդ կարգի դիպլոմ
	Մուրադյան Լիլիթ	Կողբի թիվ 2 մ/դ	10-րդ	Հայոց լեզու	Գովասանագիր

Այս տարի ևս ամփոփվեցին ներառական կրթության ծրագրի իրականացման արդյունքները:

2015թ. ընթացքում Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից տրված եզրակացության հիման վրա վկայագրվել և ներառական կրթության համակարգում ընդգրկվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 151 երեխա: 2016թ. գարնանը գնահատման կենտրոնի կողմից տրված եզրակացության հիման վրա վկայագրվել է 202 երեխա:

Մարզպետարանը պարբերաբար համագործակցում է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության եւ տարածքային համապատասխան բաժինների հետ: Եռամսյակը մեկ մարզպետարան են ներկայացվել ոստիկանության կողմից հաշվառման վերցված անչափահասների վերաբերյալ տվյալներ: Համատեղ աշխատանքների արդյունքում զգալիորեն նվազել են իրավախախտման հակում ունեցող, դժվար դաստիարակվող, նախկինում դատապարտված անչափահասների թիվը: 2016թ. օգոստոսի 1-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզի ոստիկանության տարածքային բաժինների անչափահասների գործերով տեսչություններում իրավախախտման և հանցագործության կատարման համար պրոֆիլակտիկ հաշվառման մեջ են եղել 8 անչափահաս, որից 4-ը Իջևանի տարածաշրջանից (1թռնաբարություն, 1գողություն, 2-ը՝ ուսումից խուսափող), 1-ը՝ Դիլիջանից (գողություն), 3-ը՝ Բերդի տարածաշրջանից (գողություն): ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը ԱԳԽ ոստիկանության ծառայողների հետ համատեղ իրականացրել է որոշակի միջոցառումներ՝ ուղղված անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների և իրավախախտումների կանխարգելմանը, դրանց ծնող պատճառների և պայմանների վերացմանը, երեխաների նկատմամբ ֆիզիկական, հոգեբանական, սեռական, տնտեսական բռնության հիմնախնդիրների ուսումնասիրությանը, ինչպես նաև նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությանը: ՀՀ Տավուշի մարզպետարանում ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի նախաձեռնությամբ կազմակերպվել են քննարկումներ՝

Մարզի 77 հանրակրթական դպրոցներից 32-ն ունեն լոկալ ջեռուցում, 2 դպրոց ջեռուցվում է գազի վառարաններով, 2-ը՝ էլեկտրաէներգիայով և 41 դպրոց ջեռուցվում է դիզելային վառելիքի և փայտի վառարաններով:

2015թ. ընթացքում պետբյուջեի միջոցներով մարզի 7 դպրոցներում իրականացվել են հետևյալ աշխատանքները, մասնավորապես՝

Կողբի թիվ 1 միջն. դպրոցի վերանորոգում

Ն.Ծաղկավանի միջն դպրոցի վերանորոգում

Իջևանի թիվ 5 հիմն. դպրոցում վերանորոգում

Գանձաքարի միջն. դպրոցում վերանորոգում

Արճիսի միջն. դպրոցի վերանորոգում

Բարեկամավանի միջն. դպրոցի պատուհանների վերատեղադրում և պաշտպանիչ հենապատի կառուցում

Դեղձավանի հիմն. դպրոցի տանիքի վերանորոգում:

2016թ.-ին պետքույզի միջոցներով իրականացվում է Թեղուտի դպրոցի վերանորոգման աշխատանքները:

Սահմանված ժամկետում ուսումնասիրվել և «Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ» է ներկայացվել 2016-2017 ուսումնական տարում անհրաժեշտ դասագրքերի պատվերը: 2016-2017 ուսումնական տարվա համար նախատեսված դասագրքերից ստացվել է պետական միջոցներով հրատարակված 24, ԴՇՀ-ի միջոցներով հրատարակված՝ 13 անուն դասագիրք: Ստացվել է նաև ուսումնասօժանդակ 6 ձեռնարկ:

Վերահսկողություն է սահմանվել դասագրքերի վարձավճարների հավաքագրման գործընթացի նկատմամբ: Տավուշի մարզպետի 20.10.2015թ. թիվ 202-Ա որոշմամբ փոխհատուցվել են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարները:

«Թիչ Ֆոր Արմենիա» կրթական հասարակական կազմակերպությունը, որը համագործակցում է ՀՀ ԿԳՆ հետ, իր «Կրթություն Հայաստան» ծրագրի շրջանակներում 2015-2016 ուստարում Տավուշի մարզի Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոց (հատուկ մանկավարժ) և Չորաթանի միջնակարգ դպրոց (անգլերեն լեզվի ուսուցիչ) երկու տարով երկու մանկավարժ են գործուղել, որոնց կարիքը տվյալ դպրոցներն ունեին: Գործուղված մանկավարժները, բուհերն ավարտած ու համապատասխան վերապատրաստում անցած մասնագետներ են, ովքեր ապրելով ու աշխատելով տվյալ համայնքում, դպրոցում առաջնորդվել են ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված կրթական ծրագրերով, ինչպես նաև կազմակերպել են արտադասարանական զարգացման միջոցառումներ դպրոցի աշակերտների համար:

2015-2016 ուստարում առաջադիմության վերաբերյալ արձանագրվել են հետևյալ ցուցանիշները՝

1. 4 մեդալակիր (1-ը Բերդավանի միջն.դպրոցից, 2-ը՝ Կողբի թիվ 2 միջնակարգ դպրոցից, 1-ը Դիլիջանի ավագ դպրոցից)
2. գերազանցիկ՝ 2012 աշակերտ (որից 39-ը՝ 9-րդ դասարանցի)
3. երկտարեցի՝ 24 աշակերտ:

Ձեկույցն ընդունվեց ի գիտություն:

2. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2016 Թ. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

/գեկ.՝ Ռ.Ներսեսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

Ձեկուցողը ներկայացրեց, որ մարզի 62 համայնքների 2016 թ. տեղական բյուջեների տարեկան նախատեսված եկամուտների հանրագումարը կազմել է 3218.5 մլն. դրամ, որից սեփական եկամուտները՝ 743.0 մլն. դրամ, որը կազմում է ընդհանուր գումարի 23.1 %-ը, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 2475.5 մլն. դրամ, այդ թվում ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիան՝ 2214.7 մլն. դրամ: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով մարզի համայնքներին նախատեսված դոտացիան 113.4 մլն. դրամով ավել է 2015 թվականին հատկացված դոտացիայից:

2016 թվականի ապրիլի 1-ի դրությամբ մարզի համայնքների եկամուտների փաստացի մուտքը կազմել է 782.0 մլն. դրամ, որը կազմում է առաջին եռամսյակի նախատեսվածի 99.2%-ը, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 178.2 մլն. դրամ կամ կատարվել է նախատեսվածի 106.2 %-ը:

2016 թվականի ապրիլի 1-ի դրությամբ մարզի համայնքների սեփական եկամուտները 2015 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավել են հավաքագրվել 44.1 մլն. դրամով, այդ թվում հողի

հարկի գծով՝ 25.9 մլն. դրամ, գույքահարկի գծով՝ 8.6 մլն. դրամ, տեղական տուրքի մասով՝ 422.0 հազար դրամ, այլ եկամուտների գծով՝ 9.9 մլն. դրամ: Պետական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների գծով պակաս է հավաքագրվել 660.0 հազար դրամ:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների կատարողականները ս/թ ապրիլի 1-ի դրությամբ հետևյալն է.

- հողի հարկ – 2016 թ. առաջին եռամսյակում նախատեսվել է 36.9 մլն. դրամ, հավաքագրվել է 45.4 մլն. դրամ, կամ կատարվել է 132.8 %-ով (հավաքագրված գումարից 27.0 մլն. դրամը սահմանամերձ համայնքներին փոխանցված աջակցության գումարն է):

Հողի հարկի մասով ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Իծաքար 6.5 %, Պողովան 11.6 %, Տավուշ 12.8 %, Գոշ 19.0 %, Արճիս 20.5 %, Դիտավան 23.1%, Գետահովիտ 28.6%, Աչաջուր 30.8 %, իսկ Զորական համայնքն ընդհանրապես գումար չի հավաքագրել (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը),

- գույքահարկ -հավաքագրվել է 75.2 մլն. դրամ կամ կատարվել է 106.2%-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Դիտավան 38.5 %, Լուսաձոր 51.6 %, Զինչին 59.5 %, իսկ Զորական համայնքն ընդհանրապես գումար չի հավաքագրել (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը):

- տեղական տուրքեր – հավաքագրվել է 8.7 մլն. դրամ կամ կատարվել է 73.3 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Նավուր 10.0 %, Հաղթանակ 27.0 %, Հովք 32.0 %, Վարազավան 34.7 %, Գանձաքար 38.2 % և այլ համայնքներ: Հարկ է նշել, որ թվով 13 համայնքներ, որոնք առաջին եռամսյակում նախատեսել են տեղական տուրքերից մուտքեր, ապրիլի 1-ի դրությամբ ընդհանրապես գանձումներ չեն կատարել: Նման իրավիճակներից խուսափելու համար համայնքների ղեկավարներին առաջարկվում է վերանայել եռամսյակային համամասնությունները (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը):

- գույքի վարձակալությունից եկամուտներ – հավաքագրվել է 13.9 մլն. դրամ կամ կատարվել է 65.6 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Հաղթանակ 4.2 %, Բագրատաշեն 13.7 %, Տավուշ 15.0 %, Գետահովիտ 15.5 % և այլ համայնքներ (կցվում է ցանկը): Իծաքար և Դեբեդավան համայնքները ապրիլի 1-ի դրությամբ ընդհանրապես գանձումներ չեն կատարել:

Ցածր կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին առաջարկվում է ձեռնարկել կտրուկ միջոցներ եռամսյակային համամասնություններով սահմանված սեփական եկամուտները հավաքագրելու ուղղությամբ:

«Կառավարության 18.02.2016 թ. թիվ 144-Ն որոշմամբ մարզի սահմանամերձ 23 համայնքների հողի հարկի և գույքահարկի փոխհատուցման նպատակով առաջին եռամսյակում ցուցաբերվել է 29.1 մլն. դրամի պետական աջակցություն: Սահմանամերձ համայնքների ղեկավարներին առաջարկվում է հետևողական լինել և հատկացված գումարներն ըստ հարկատուների մուտքագրել հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական բազա, որի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան: Ս/թ մարտի 18-ին հատկացված գումարների մուտքագրման վերաբերյալ տեղեկատվություն ներկայացրել են միայն Այգեհովիտ և Ոսկեվան համայնքները, իսկ կառավարության որոշմամբ սահմանված կարգի համաձայն բազաներում մուտքագրումները պետք է կատարվեն հատկացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

«Կառավարության 31.03.2016 թ. թիվ 344-Ն որոշմամբ մարզի համայնքներին նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացման, ինչպես նաև 1974 թվականից հետո ծնված նվազագույն աշխատավարձ ստացողների նպատակային սոցիալական վճարների հետ կապված, առաջացած լրացուցիչ ծախսերի փոխհատուցման նպատակով նախատեսվել է 139163.7 հազար դրամ, որից ս/թ ապրիլի 20-ի դրությամբ հատկացվել է 38656.1 հազար դրամ:

Մարզի 62 համայնքներից թվով 47 համայնքների հողի հարկ և գույքահարկ վճարողների հաշվառման ու հողի հարկի և գույքահարկի հաշվարկման տեղեկատվական ավտոմատացված համակարգի տվյալները վարվում են Իջևանի, Բերդի և Նոյեմբերյանի համայնքների միությունների կողմից: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքների կողմից ներկայացված հողի հարկի և

գույքահարկի ապառքները 216.6 մլն. դրամով պակաս են համայնքների միությունների կողմից ներկայացված ապառքներից, իսկ 01.01.2015-01.04.2016թ. ժամանակահատվածում գանձապետարան մուտքագրված հողի հարկի և գույքահարկի գումարների և համայնքների միությունների կողմից տեղեկատվական բազա մուտքագրված գումարների տարբերությունը կազմում է 65.6 մլն. դրամ, այդ թվում գույքահարկը 15.5 մլն. դրամ, հողի հարկը 50.1 մլն. դրամ: Բերված տվյալները ցույց են տալիս, որ հողի հարկի և գույքահարկի դիմաց վճարված գումարներն ամբողջությամբ արտահայտված չեն տեղեկատվական բազաներում, որի հետևանքով առաջանում են համայնքներում առկա տվյալների և համայնքների միությունների կողմից վարվող բազաների միջև տարբերություններ (աղյուսակ 1 և 2):

2006 և 2008 թվականներին հողի հարկի և գույքահարկի բազաները համայնքների ավագանիների որոշմամբ հանձնվել են համայնքների միություններին, քանի որ նշված ժամանակահատվածում համայնքները չունեին համապատասխան տեխնիկական և մարդկային ռեսուրսներ, ինչպես նաև որոշ համայնքներում բացակայում էր ինտերնետային կապը: Այժմ համայնքներն ունեն բոլոր հնարավորություններն ինքնուրույն վարելու հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական բազաները, որը կնպաստի հավաքագրված գումարները ժամանակին մուտքագրել տեղեկատվական բազաներ, կհեշտացի համայնքների աշխատանքները բնակիչների հետ:

Համայնքներում հավաքագրված հողի հարկի և գույքահարկի գումարները համայնքները յուրաքանչյուր ամիս տրամադրում են համայնքների միություններին բազաներում մուտքագրելու համար, որը լրացուցիչ ժամանակ և աշխատանք է պահանջում համայնքներից, իսկ համայնքների միություններն էլ չունեն համապատասխան տեխնիկական և մարդկային ռեսուրսներ համայնքներից ստացված տեղեկատվությունները ժամանակին մուտքագրելու համար: Համայնքներից շատերը դիմել են մարզպետարան, որ ունեն հնարավորություն հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական բազաները ինքնուրույն վարելու համար և խնդրել են մարզպետարանի միջնորդությունը սահմանված կարգով այն հանձնելու համայնքներին:

Ավարտելով իր զեկույցը, Ռ.Ներսեսյանը նշեց, որ ՀՀ Տավուշի մարզպետարանը պատրաստ է մարզի համայնքներին ցուցաբերել մեթոդական և խորհրդատվական օգնություն:

Առաջարկվեց.

Մարզի համայնքների ղեկավարներին՝

1. Ձեռնարկել միջոցառումներ 2016 թվականի տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտները եռամսյակային համամասնություններով սահմանված չափաքանակներին համապատասխան հավաքագրելու ուղղությամբ:
2. Հետևողական աշխատանքներ տանել համայնքների միությունների հետ ՀՀ կառավարության 18.02.2016 թ. թիվ 144-Ն որոշմամբ համայնքներին հատկացված միջոցները ավտոմատացված տեղեկատվական համակարգ մուտքագրելու համար:
3. Սեփական եկամուտների մինչև 80 % կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին՝ կտրուկ միջոցներ ձեռնարկել տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրումն ապահովելու ուղղությամբ:

3. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅՅՅՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/զեկ.՝ Ն.Ճաղարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ/

Ձեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Իջևանի, Դիլիջանի, Բերդի և Նոյեմբերյանի ՍԱՏԳ-ները իրենց գործունեությունն իրականացնում են ՀՀ Տավուշի

մարզպետի կողմից հաստատված կանոնադրության համաձայն, առաջնորդվելով „Սոցիալական աջակցության մասին”, „Պետական նպաստների մասին” օրենքներով, այլ օրենքներով, ՀՀ կառավարության մի շարք որոշումներով և իրավական ակտերով: Գործակալությունները իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերում և սահմանված կարգով հաշվառում /փաստագրում/ են աղքատ և սոցիալապես անապահով ընտանիքներին /աղյուսակ 1/:

Աղյուսակ 1.

h/h	Գործակալության անվանումը	Փաստագրված ընտանիքների թիվը 2016թ. 1-ին կիսամյակում	ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների միջին ամսական թիվը	սոցիալական նպաստ ստացող ընտանիքների միջին ամսական թիվը	Հրատապ դրամական օգնություն ստացողների միջին թիվը
1	Իջևանի ՍԱՏԳ	1321	1544	427	118
2	Դիլիջանի ՍԱՏԳ	1022	920	307	53
3	Բերդի ՍԱՏԳ	837	909	234	57
4	Նոյեմբերյանի ՍԱՏԳ	671	739	295	48
	Ընդամենը	3851	4112	1263	276

Օրենսդրությամբ սահմանված դեպքերում գործակալությունը պարզում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը՝ դրանք տրամադրած մարմիններում և կազմակերպություններում կամ գործակալությանը հասանելի տեղեկատվական շտեմարանների միջոցով: Հարակից բազաների կիրարկման արդյունքների մասին տեղեկատվությունը գործակալությունը պարբերաբար ներկայացնում է և մարզպետարան, և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

h/h	ՍԱՏԳ-ի անվանումը	ՀՀ տարբեր գերատեսչություններից հարակից բազաների կիրարկման համար 2016թ. 1-ին կիսամյակում ստացված ընտանիքների թիվը	Որից դրական են լուծվել
1	Իջևանի ՍԱՏԳ	37	32
2	Դիլիջանի ՍԱՏԳ	814	778
3	Բերդի ՍԱՏԳ	874	819
4	Նոյեմբերյանի ՍԱՏԳ	537	522
	Ընդամենը	2262	2151

Գործակալությունը կազմակերպում է նաև պետական նպաստների և այլ դրամական օգնությունների նշանակումը և վճարումը /աղյուսակ 3-ում ներկայացված են 2016թ. հուլիս ամսվա տվյալները/:

Աղյուսակ 3.

h/h	ՍԱՏԳ-ի անվանումը	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը	Հրատապ դրամական օգնություն ստացողների թիվը	Երեխայի ծննդյան միանվագ դրամական օգնություն ստացողների թիվը	Ավանդների փոխհատուցում ստացողների թիվը
1	Իջևան	1545	438	108	12	165
2	Դիլիջան	913	306	54	6	1
3	Բերդ	906	236	56	3	89
4	Նոյեմբերյան	779	303	48	0	90
	Ընդամենը մարզում	4143	1283	266	21	345

2016թ. 1-ին կիսամյակի ընթացքում սոցիալական որևէ աջակցություն ստանալու համար /այդ թվում՝ տարբեր տեսակի նպաստներ, այլ դրամական վճարներ, բնափրային, իրավական, խորհրդատվական և այլն/թվով 5307 քաղաքացիների դիմել են գործակալություններին, որոնք էլ իրականացրել են տունայցեր, կատարել սոցիալական վիճակի ուսումնասիրություններ: Արդյունքում 5238 ընտանիքներ ստացել են աջակցություններ /աղյուսակ 4/:

Աղյուսակ 4.

h/h	ՍԱՏԳ-ի անվանումը	Սոցիալական աջակցություն ստանալու համար դիմումների քանակը	Դրական լուծվածների քանակը
1	Իջևանի ՍԱՏԳ	2461	2394
2	Դիլիջանի ՍԱՏԳ	1208	1206
3	Բերդի ՍԱՏԳ	783	783
4	Նոյեմբերյանի ՍԱՏԳ	855	855
	ընդամենը	5307	5238*

* Ցուցաբերած աջակցությունների մեջ ներառված են նաև ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1532-Ն որոշման համաձայն բաշխված DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերը:

Գործակալությունները կազմակերպել են նաև տարածքային մակարդակում սոցիալական ցանցի ստեղծման աշխատանքները, իրականացրել են սոցիալական համագործակցության համաձայնագրերի ընդունման գործընթացը:

Հանձնարարվեց.

Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական Ապահովության վարչության գլխավոր մասնագետ Ն.Ճաղարյանին.

Ուշադրության կենտրոնում պահել ՍԱՏԳ-ների կողմից իրականացվող գործառույթների կատարման ընթացքը՝ հասցեականությունը բարձրացնելու և խախտումները բացառելու նպատակով:

4. <<ՍԵՌԻ ՀԱՏԿԱՆԻՇՈՎ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ>> ԵՎ <<ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ>> 2016Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/զեկ.՝ Հ.Քոչարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ/

Զեկուցողը ներկայացրեց, որ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը մարզում շարունակում է սեռի հատկանիշով բռնության կանխարգելման, ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության, նրանց տրամադրվող ծառայությունների բարելավման ու այդ ծառայությունների առավել արդյունավետ կազմակերպմանն ուղղված միջոցառումների իրականացմանը:

2016.թ-ին մարզում հայտնաբերվել են ընտանեկան բռնության ենթարկված 4 կանայք: Բաժնի համապատասխան մասնագետների միջոցով նրանց հետ տարվել է հոգեբանամանկավարժական բնույթի աշխատանքներ:

Գանձաքար, Աչաջուր, Այգեհովիտ, համայնքներում իրականացվել են ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումներ՝ <<Վերջ բռնությանը>> կարգախոսով: Մասնակիցներին տրամադրվել են կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված խորհրդատվություն:

Սեռի հատկանիշով բռնության երևույթի կանխարգելման, բռնության երևույթի հանդեպ անհանդուրժողականության միջավայրի ձևավորման, սեռի հատկանիշով բռնության մասին իրազեկման բարձրացման, տեղեկատվական և մեթոդական աջակցությանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով մարզի մի շարք համայնքներում կազմակերպվել են կլոր սեղաններ, քննարկումներ <<Ընտանեկան բռնության քաղաքականություն>> թեմայով:

Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքների, իրավախախտ անչափահասների շրջանում ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության տարածքային բաժինների հետ կազմակերպվել են ընտանեկան բռնության կանխարգելման հիմնահարցերի վերաբերյալ քննարկումներ:

Հասարակության շրջանում կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնահարցերի լուսաբանման, սեռի հատկանիշով խտրական գործելակերպի հաղթահարման նպատակով մարզի 2 համայնքներում /Սևքար, Գետահովիտ/ կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ՝ <<Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը>> թեմայով:

Մարզային և համայնքային մակարդակներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետության բարձրացման, այդ աշխատանքների համակարգմանն ու մշտադիտարկմանն ուղղված մի շարք միջոցառումներ են իրականացվել մարզպետարանում . կլոր - սեղանների և խորհրդակցությունների տեսքով:

Ավարտելով իր զեկույցը, Հ.Քոչարյանը նշեց, որ կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրների վերաբերյալ մարզի ԶԼՄՆ –երով իրականացվել են լուսաբանման աշխատանքներ, տեղադրվել են հոդվածներ, կազմակերպվել հաղորդումներ:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

5. ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/զեկ.՝ Մ.Մխիթարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ/

Ձեկուցողը ներկայացրեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ Օրենքի 77.1-րդ և 77.2 -րդ հոդվածների պահանջների կատարման կարգով և ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 29.12.2015թ. թիվ 1381-Ա <<Վարչական հսկողության 2016թ. աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին>> հրամանով նախատեսվել և առաջին կիսամյակում ըստ եռամսյակների սահմանված գրաֆիկով իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 9՝ Բերքաբեր, Ծաղկավան /Իջևանի շրջ./, Սարիգյուղ, Ոսկեպար, Չինարի, Չորաթան, Չինչին, Նավուր և Ջուջևան համայնքների ղեկավարների ու ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ, որոնց վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Հսկողության արդյունքների վերլուծությամբ պարզվել է, որ վերջին տարիներին մարզպետարան - համայնքների ղեկավարների աշխատակազմեր համագործակցությունը դրական արդյունք է տվել: Մասնավորապես. բարձրացել է համայնքային ծառայողների իրավական գրագիտությունն ու պատասխանատվությունը:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում նկատվել են հետևյալ հիմնական խախտումները.

Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ 40-րդ և 41-րդ հոդվածների, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի, <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Չնայած նրան, որ բազմիցս համայնքների ղեկավարներին տրվել են գրավոր զգուշացումներ համայնքներում տրվող շինթույլտվություններ և ավարտական ակտերի օրինակները մարզպետարան ներկայացնելու համար, սակայն ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 91-Ն և 626-Ն որոշումների կարգը մարզի համայնքների մի մասում դեռևս չի պահպանվում:

Նշված համայնքապետարանների աշխատակազմերի կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, առկա խնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ և անհրաժեշտ պարզաբանումներ ներկայացնելու նպատակով ուսումնասիրությունների արդյունքում մանրակրկիտ վեր են հանվել թերություններն ու բացթողումները, որոնք քննարկվել են համայնքների ղեկավարների և աշխատակազմերի քարտուղարների հետ: Ձեռք առնված միջոցառումների շնորհիվ դրանք սահմանված ժամկետներում վերացվել են:

Հանձնարարվեց.

Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Մ.Մխիթարյանին.

Մշտական ուշադրության կենտրոնում պահել համայնքներում վարչական հսկողության գործընթացը:

ՄԱՐԶՊԵՏ



Հ.ԱՔՈՎՅԱՆ